ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

«Կոշտ թափոնների տեղական կառավարման պանավորման ուղեցույցի մշակում» ծրագիր

Վերապատրաստման կարիքների գնահատման (ՎԿԳ) զեկույց

Կոշտ կենցաղային թափոնների տեղական կառավարման պլանավորման ուղեցույցի մշակում
և ուղեցույցի կիրառման համար վերապատրաստման կարիքների գնահատում»
ծրագիր

Պատրաստել են ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի և «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի փորձագետները:
Մարտի 15, 2021 թ.

Սույն ծրագիրն իրականացվել է ՀԱՀ Քաղաքականությունների մշակման և հետազոտությունների հիմնադրամի շրջանակներում, որը ֆինանսավորվել է Շվեդիայի կառավարության կողմից՝ ՀԱՀ և ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ: Հետազոտության մեջ արտահայտված տեսակետները և կարծիքները միայն հեղինակներինն են, և չեն արտացոլում կողմերից որևէ մեկի պաշտոնական քաղաքականությունը կամ դիրքորոշումը:

Ծրագրի կայքէջ՝ https://ace.aua.am/hy/waste/planning_guidelines

Մարտ, 2021թ.

Բովանդակություն

Ամփոփ նկարագիր....4
1 Ներածություն....5
2 ՎԿԳ մեթոդաբանություն....6
3 Մասնակիցներ....6
4 Վիճակագրական վերլուծություն....8
4.1 Համայնքապետարաններում պլանավորման ընդհանուր գործընթացները....8
4.2 Համայնքապետարաններում կոշտ թափոնների կառավարման պլանավորման գործընթացները....8
4.3 Համայնքապետարաններում կոշտ թափոնների կառավարման պլանավորման գծով վերապատրաստման նախադեպեր....10
4.4 Համայնքապետարաններում թափոնների կառավարման պլանավորման գծով վերապատրաստման կարիքներ....11
5 Եզրահանգումներ և առաջարկներ....15
Հավելված Ա – Վերապատրաստման կարիքների գնահատման հարցաշար....16

Ամփոփ նկարագիր

Վերապատրաստման կարիքների սույն գնահատումն (ՎԿԳ) անցկացվել է «Կոշտ կենցաղային թափոնների տեղական կառավարման պլանավորման ուղեցույցի մշակում» ծրագրի շրջանակներում՝ պարզելու Ուղեցույցի կիրառման համար վերապատրաստման կարիքները:

Գնահատումն իրականացվել է Հավելված Ա – Վերապատրաստման կարիքների գնահատման հարցաշարներկայացված հարցաշարի միջոցով, որին պատասխանել է 164 համայնքապետարան՝ ներառյալ խոշորացվածմ և ոչ խոշորացված համայնքները:

Հարցման արդյունքների վերլուծությունը ցույց տվեց համայնքապետարաններում վերապատրաստման խիստ անհրաժեշտություն կոշտ թափոնների կառավարման պլանավորման մի շարք ուղղություններով, մասնավորապես՝ պլանավորման մեթոդաբանություն և անհրաժեշտ գործիքակազմ, պլանի կառուցվածք և բովանդակություն, պլանավորման մեջ ՏՏ միջոցների կիրառում:

Համայնքապետարաններում արձանագրվել է անձնակազմի գիտելիքների և հմտությունների ցածր մակարդակ կոշտ թափոնների կայուն կառավարման այնպիսի հիմնական սկզբունքների և գործիքների մասով, ինչպիսիք են թափոնների հիերարխիան (ստորակարգումը), թափոնների ոլորտում կանաչ հանրային գնումները, թափոնների գոյացման կրճատման ծրագրերը:

Վերապատրաստման կարիքների գնահատման արդյունքները դասընթացների ծրագրի մշակման հիմք կհանդիսանան, որը միտված կլինի բարձրացնելու տեղական ինքնակառավարման մարմինների կոշտ թափոնների տեղական կառավարման պլանավորման և Ուղեցույցի կիրառման համար անհրաժեշտ կարողությունները:

1 Ներածություն

Վերապատրաստման կարիքների սույն գնահատումն անցկացվել է «Կոշտ կենցաղային թափոնների տեղական կառավարման պլանավորման ուղեցույցի մշակում և ուղեցույցի կիրառման համար վերապատրաստման կարիքների գնահատում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվել է Հայաստանի ամերիկյան համալսարանի, «Ուրբան» Կայուն Զարգացման Հիմնադրամի և ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համագործակցությամբ՝ ՀԱՀ Քաղաքականությունների մշակման և հետազոտությունների հիմնադրամի շրջանակներում, Շվեդիայի Կառավարության ֆինանսավորմամբ:

Գնահատումն իրականացվել է 2021 թվականի մարտ ամսվա առաջին տասնօրյակում և նպատակ է ունեցել պարզելու ծրագրի շրջանակներում մշակվող Կոշտ կենցաղային թափոնների տեղական կառավարման պլանավորման Ուղեցույցը համայնքապետարաններում կիրառելու համար համայնքապետարանի աշխատակիցների ներկայիս կարողությունները և անհրաժեշտ վերապատրաստման կարիքները:

Ծրագրի մանրամասները, Ուղեցույցը և ծրագրի այլ վերջնարդյունքները հասանելի են ծրագրի կայքէջում՝ https://ace.aua.am/hy/waste/planning_guidelines/

2 ՎԿԳ մեթոդաբանություն

Սույն ՎԿԳ-ն իրականացնելու հիմնական քայլերը ներկայացված են ստորև բերված դիագրամում:

Հմտությունների և գիտելիքների ցանկը մշակվել է՝ համադրելով ռազմավարական պլանավորման համար անհրաժեշտ ընդհանուր գիտելիքները և կոշտ թափոնների կառավարմանը հատուկ գիտելիքները և հմտությունները: ՎԿԳ հարցաշարի նախագիծը մշակվել է «Google Forms» առցանց հարթակում, հմտությունների և գիտելիքների մշակված ցանկի հիման վրա:

Փետրվար ամսին անց է կացվել բազմաշահակիր կողմերի հանդիպում, որին մասնակցել են տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, և այլ մասնակիցներ Երևանից և 9 մարզերից՝ բացի Սյունիքից:

Բազմաշահակիր կողմերի հանդիպման ժամանակ մասնակիցներին ներկայացվել և նրանց հետ քննարկվել են մշակված ՎԿԳ հարցաշարի *նախնական* բովանդակությունն ու կառուցվածքը: ՎԿԳ հարցաշարի վերաբերյալ հնչել են մի քանի դիտարկումներ և առաջարկներ, որոնց հիման վրա այն լրամշակվել և վերջնականացվել է՝ հետագա շրջանառման նպատակով: ՎԿԳ հարցաշարի վերջնական շրջանառված տարբերակը ներկայացված է Հավելված Ա-ում:

Հարցաշարը մշակվել է հետևյալ ուղղություններով տեղեկատվություն հավաքելու նպատակով՝ համայնքապետարաններում պլանավորման ընդհանուր գործընթացներ, կոշտ թափոնների կառավարման պլանավորման գործընթացներ, կոշտ թափոնների կառավարման պլանավորման գծով վերապատրաստման նախկին փորձ և ներկայիս կարիքներ:

ՎԿԳ հարցաշարը մարզպետարանների միջոցով շրջանառվել է համայնքապետարանների շրջանակում՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության անմիջական համակարգմամբ: Համայնքապետարանների՝ հարցաշարը լրացնելուն աջակցել է ծրագրի փորձագիտական թիմը:

ՎԿԳ հարցման արդյունքները վերլուծվել են ծրագրի փորձագիտական թիմի կողմից և ամփոփվել են սույն զեկույցում: Վերլուծության արդյունքները դասընթացների ծրագրի մշակման հիմք կհանդիսանան, որը միտված կլինի բարձրացնելու տեղական ինքնակառավարման մարմինների կոշտ թափոնների տեղական կառավարման պլանավորման և Ուղեցույցի կիրառման համար անհրաժեշտ կարողությունները:

3 Մասնակիցներ

ՎԿԳ հարցմանը մասնակցելու հրավիրվել են հանրապետության համայնքապետարանները: Ինչպես նշվել էր, ՎԿԳ հարցաշարը մարզպետարանների միջոցով շրջանառվել է համայնքապետարանների շրջանակում՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության անմիջական համակարգմամբ: Մարզպետարանների համապատասխան աշխատակիցները համակարգել են համայնքապետարանների շրջանում հարցաշարը տարածելու և դրան հնգօրյա ժամկետում պատասխանելու գործընթացը: Ընդհանուր ստացվել է 164 պատասխան, որոնց բաշխումն ըստ մարզերի ներկայացված է

Պատկեր 1-ում: Ինչպես երևում է ամենաակտիվ մասնակցությունը ցուցաբերվել է Արարատի մարզում, մինչդեռ նվազագույն մասնակցությունը՝ Արագածոտնի մարզում (ընդամենը 3 պատասխան):



Պատկեր 1 – Մասնակիցների բաշխումն ըստ մարզերի

4 Վիճակագրական վերլուծություն

4.1 Համայնքապետարաններում պլանավորման ընդհանուր գործընթացները

Մինչ համայնքապետարանների մեծ մասը մշակում է «Համայնքի հնգամյա զարգացման պլան» և «Տարեկան աշխատանքային պլան», միայն 18%-ն է մշակում նաև առանձին «Աղբահանության պլան»:

Պլանավորման գործընթացներում ներգրավվող մասնագետները 95% դեպքերում համայնքի ղեկավարի աշխատակազմից են, 26% դեպքերում՝ կոմունալ բաժնից, 14% դեպքերում՝ տնտեսական զարգացման բաժնից, և 12% դեպքերում՝ նաև այլ բաժիններից և ստորաբաժանումներից:



Պատկեր 2 - Պլանավորման գործընթացում ներգրավված բաժինները կամ ստորաբաժանումները
Պատասխանների թիվ՝ 164

Առհասարակ պլանավորման գործընթացում ներգրավված են լինում տարբեր թվով մասնագետներ: Թերևս 50% դեպքերում պլանավորումն իրականացնում է 1-3 աշխատակից, մինչդեռ մնացյալ դեպքերում 4 և ավելի մասնագետներ:



Պատկեր 3 – Պլանավորման գործընթացներում ներգրավվող աշխատակիցների թիվը
Պատասխանների թիվ՝ 164

4.2 Համայնքապետարաններում կոշտ թափոնների կառավարման պլանավորման գործընթացները

Ինչպես արդեն նշվեց, հարցմանը պատասխանած համայնքապետարանների միայն 18%-ն է մշակում նաև առանձին աղբահանության պլան: Մնացած համայնքապետարանների

պատասխաններից բխում է, որ առանձին աղբահանության պլան չմշակելու հիմնական պատճառները վերջինիս անհրաժեշտության բացակայությունն է (պատասխանների մոտ 50%), ինչպես նաև մասնագետի, գիտելիքի, հմտությունների ու մարդկային ռեսուրսի պակասը (պատասխանների մոտ 30%):



Պատկեր 4 - Համայնքներում աղբահանության առանձին պլան չունենալու պատճառները
Պատասխանների թիվ՝ 164

Եթե համայնքապետարաններում աղբահանության առանձին պլան է մշակվում, ապա հիմնականում (62% դեպքերում) պլանավորման մեջ ներգրավվում է մինչև 3 աշխատակից: Միայն 24% դեպքերում՝ 4-5, իսկ 14% դեպքերում՝ 7 և ավելի աշխատակից է ներգրավվում պլանավորման գործընթացում: Տե՛ս Պատկեր 5-ը:



Պատկեր 5 - Համայնքներում աղբահանության առանձին պլան մշակելուն ներգրավված աշխատակիցների թիվը
Պատասխանների թիվ՝ 30

Աղբահանության առանձին պլանի մշակման համար պահանջվող ժամանակը շատ տարբեր է հարցմանը մասնակցած համայնքներում: Թերևս 90% դեպքերում այն չի գերազանցում մեկ ամիսը, ինչպես երևում է ստորև բերված պատկերից:



Պատկեր 6 - Համայնքներում աղբահանության առանձին պլան մշակելու համար պահանջված ժամանակը
Պատասխանների թիվ՝ 30

Հարցումը ցույց է տալիս, որ աղբահանության առանձին պլանի մշակման ժամանակ ձեռնարկվող գործողությունների շարքում գերակշռում է խնդիրների վերհանումը, շահակիրների հետ հանդիպումները, մինչդեռ նպատակների և թիրախների սահմանումը, ուժեղ և թույլ կողմերի վերլուծությունը (SWOT analysis) և ուղեցույցներից օգտվելը ավելի քիչ հանդիպող գործողություններ են: Ամենաքիչ դերը տրվում է լոգիստիկ և տնտեսական հաշվարկներին, որոնք արվում են միայն 27% դեպքերում:



Պատկեր 7 – Համայնքներում աղբահանության առանձին պլան մշակելու ժամանակ ձեռնարկվող գործողություններ
Պատասխանների թիվ՝ 30

4.3 Համայնքապետարաններում կոշտ թափոնների կառավարման պլանավորման գծով վերապատրաստման նախադեպեր

Հարցմանը մասնակցած 164 համայնքներից միայն 8-ում են անցկացվել թափոնների կառավարման պլանավորման գծով վերապատրաստումներ (6%): Ինչպես երևում է ստորև ներկայացված աղյուսակում, վերապատրաստմանը մասնակցել է մինչև 5 աշխատակից, որոնց հիմնական մասը շարունակում է աշխատել համայնքապետարանում:

Քանի՞ աշխատակից է վերապատրաստվել	Քանի՞ աշխատակից է ներկայում աշխատում	Վերապատրաստումը իրականացնող կազմակերպության անունը

1	1	«Մաքուր Գորիս» ՀԿ
2	2	«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ
2	0	«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ
3	1	«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ
3	3	«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ
3	3	«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ
5	4	«Գեոռիսկ» ՓԲԸ
5	5	«Գեոռիսկ» ՓԲԸ

Պատկեր 8 – Համայնքապետարաններում նախկին վերապատրաստման դասընթացների մանրամասներ
Պատասխանների թիվ՝ 8

4.4 Համայնքապետարաններում թափոնների կառավարման պլանավորման գծով վերապատրաստման կարիքներ

Սույն վերապատրաստման կարիքների գնահատման նպատակներից մեկն էր պարզել համայնքապետարաններում անձնակազմի գիտելիքների և հմտությունների մակարդակը, մասնավորապես՝ կոշտ թափոնների կայուն կառավարման որոշ հիմնական սկզբունքների և գործիքների իմացությունը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ութ սկզբունքների և գործիքների իմացության և կիրառման մակարդակի վերաբերյալ հարցման արդյունքները:

Թափոնների կայուն կառավարման սկզբունք կամ գործիք	Ծանոթ չեմ	Ծանոթ եմ, բայց չեմ կիրառում	Ծանոթ եմ և կիրառում եմ
«Աղտոտողը վճարում է» սկզբունք	43%	29%	28%
Արտադրողի ընդլայնված պատասխանատվություն	73%	21%	6%
Թափոնների կառավարման ստորակարգում/հիերարխիա	81%	16%	2%
Թափոնների կառավարման մասնակցային բյուջետավորում	79%	15%	6%
Կատարողական հիմքով պայմանագրերի կիրառում	52%	17%	30%
Կանաչ հանրային գնումներ թափոնների ոլորտում	78%	19%	3%
Թափոնների գոյացման կրճատման ծրագրեր	68%	25%	7%
Աղբավայր հեռացվող թափոնների քանակների կրճատման խթաններ	59%	27%	15%

Պատկեր 9 – Համայնքապետարաններում անձնակազմի գիտելիքների և հմտությունների մակարդակը կոշտ թափոնների կայուն կառավարման հիմնական սկզբունքների և գործիքների մասով
Պատասխանների թիվ՝ 164

Գնահատման մեկ այլ կարևոր նպատակ էր համայնքապետարանների անձնակազմի՝ թափոնների կայուն կառավարման թվով 27 ընդհանուր թեմաների շուրջ գիտելիքների մակարդակը պարզելը: Հարցման մասնակիցները գնահատել են համայնքապետարանների անձնակազմի գիտելիքները՝ գերազանց, բավարար, թերի և բացակայող: Պատկեր 10-ն ամփոփում է գնահատման պատասխանները, ներկայացնելով հավելյալ սյունակում թերի և բացակայող գնահատված գիտելիքները ամեն թեմայի շուրջ: Վերջին տողում ներկայացված է միջին գնահատականը բոլոր թեմաների մասով:

Ինչպես երևում է Պատկեր 10-ից, քննարկված 27 թեմաների պարագայում գիտելիքների ամենամեծ բացերն առկա են կոշտ թափոնների վերամշակման եղանակների և դրանց խթանման գործիքների, ինչպես նաև համայնքում գոյացող վտանգավոր կոշտ թափոնների անվտանգ գործածության եղանակների և դրանց խթանման գործիքների մասով: Այստեղ պատասխանողների 86%-ն արձանագրել է գիտելիքների բացակայություն կամ թերացում: Համայնքում հանրային իրազեկության բարձրացման եղանակների մասով համայնքապետարանների 41%-ն արձանագրել է բավարար գիտելիքների մակարդակ, իսկ 4%-ը՝ գերազանց: Նույնատիպ գնահատական է տրվել չնախատեսված վայրերում թափոնների տեղադրման կանխարգելման եղանակների վերաբերյալ:

Կոշտ թափոնների տեղական կառավարման պլանավորմանն առնչվող գիտելիքների բացերը ևս կարևորվել են մի շարք համայնքապետարանների կողմից: Մասնավորապես, համայնքապետարանների 80%-ը արձանագրել են մշակվելիք պլանի կառուցվածքի և բովանդակության, ինչպես նաև պլանավորման համար անհրաժեշտ գործիքակազմի վերաբերյալ բացակայող կամ թերի գիտելիքներ:

Քննարկված բոլոր 27 թեմաների մասով գիտելիքների մակարդակը համայնքապետարանների 77%-ը միջինում գնահատել է որպես բացակայող կամ թերի, և միայն 22%-ն է միջինում գնահատել որպես բավարար:

Թափոնների կայուն կառավարման ընդհանուր թեմաներ	Բացակայում կամ թերի է	Բացակայում է	Թերի է	Բավարար է	Գերազանց է
Կոշտ թափոնների վերամշակման եղանակներ և դրանց խթանման գործիքներ	87%	60%	27%	13%	0%
Համայնքում գոյացող վտանգավոր կոշտ թափոնների անվտանգ գործածության եղանակներ և դրանց խթանման գործիքներ	86%	63%	23%	14%	0%
Համայնքում գոյացող կոշտ թափոնների բաղադրության գնահատում	86%	61%	25%	13%	1%
Արտադրողի ընդլայնված պատասխանատվություն որպես կոշտ թափոնների կառավարման արդյունավետ միջոց	85%	60%	25%	15%	0%
Պլանավորման մեթոդաբանություն	84%	60%	24%	16%	0%
Համայնքում գոյացող կոշտ թափոնների տեսակներ և դրանց կառավարման առանձնահատկություններ	83%	58%	25%	16%	1%
Օրգանական թափոնների կոմպոստացման եղանակներ և դրանց խթանման գործիքներ	82%	60%	23%	16%	1%
Խոշոր եզրաչափերի թափոնների գործածության եղանակներ և դրանց խթանման գործիքներ	82%	59%	23%	18%	0%
Պլանավորման մեջ ՏՏ միջոցների կիրառում	81%	56%	25%	19%	0%
Համայնքում գոյացող կոշտ թափոնների տվյալների հավաքագրման մեխանիզմներ	81%	55%	26%	19%	0%
Համայնքում գոյացող կոշտ թափոնների կառավարման հիմնական դերակատարներ և նրանց դերը	81%	55%	26%	18%	1%
Օրգանական թափոնների այլ գործածության եղանակներ և դրանց խթանման գործիքներ	81%	59%	22%	19%	0%
Մշակվելիք պլանի կառուցվածք և բովանդակություն	80%	61%	20%	19%	1%
Պլանավորման համար անհրաժեշտ գործիքակազմ	79%	55%	24%	21%	0%
Կոշտ թափոնների տեսակավորման եղանակներ և դրանց խթանման գործիքներ	79%	46%	33%	21%	1%
Աղբավայր հեռացվող թափոնների քանակների կրճատման եղանակներ և դրանց խթանման գործիքներ	79%	43%	35%	21%	1%
Թափոնների կառավարման պլանավորման մեջ հանրային մասնակցության ապահովման եղանակներ	78%	48%	30%	21%	1%
Թափոնների թերի կառավարման սոցիալ-տնտեսական ազդեցություններ	77%	47%	30%	23%	0%
Կոշտ թափոնների գոյացման կրճատման եղանակներ և դրանց խթանման գործիքներ	77%	38%	39%	23%	0%
Թափոնների կայուն կառավարման Ֆինանսավորում և բյուջետավորում (ներառյալ մասնակցային)	77%	57%	21%	22%	1%
Կոշտ թափոնների հավաքման օպտիմալացում	75%	48%	27%	24%	1%
Թափոնների թերի կառավարման բացասական ազդեցությունները հանրային առողջության, շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության վրա	74%	42%	32%	26%	0%
Աղբավայրերի կայուն կառավարում (ստեղծում, շահագործում, փակում)	70%	39%	31%	29%	1%
Թափոնների թերի կառավարման վերահսկողություն	68%	37%	31%	31%	1%
Պետություն/Համայնք-մասնավոր համագործակցության պայմանագրերի արդյունավետ կիրառում	67%	39%	28%	30%	3%
Համայնքում թափոնների չնախատեսված վայրերում թափոնների տեղադրման կանխարգելման եղանակներ	59%	28%	31%	40%	1%
Համայնքում հանրային իրազեկության բարձրացման եղանակներ	55%	24%	31%	41%	4%
Միջին գնահատական բոլոր թեմաների մասով	77%	50%	27%	22%	1%

Պատկեր 10 - Համայնքապետարանում անձնակազմի գիտելիքների մակարդակը թափոնների կայուն կառավարման ընդհանուր թեմաների շուրջ
Պատասխանների թիվ՝ 164

Այն հարցին, թե ինչպիսի վերապատրաստման կարիքներ կան թափոնների կառավարումը արդյունավետ պլանավորելու համար, համայնքապետարանների 68%-ը նշել է պլանի կառուցվածքի և բովանդակության, ինչպես նաև պլանավորման համար անհրաժեշտ գործիքակազմի վերաբերյալ վերապատրաստման կարիք: Կարևորվել է նաև պլանավորման մեթոդաբանության և պլանավորման մեջ ՏՏ միջոցների կիրառման վերաբերյալ վերապատրաստման կարիքը:



Պատկեր 11 - Համայնքապետարանում թափոնների կառավարումը արդյունավետ պլանավորելու համար վերապատրաստման կարիքներ
Պատասխանների թիվ՝ 164

Վերապատրաստման դասընթացների ձևաչափի վերաբերյալ համայնքապետարանների նախընտրությունները ներկայացված են ստորև բերված պատկերում:



Պատկեր 12 – Վերապատրաստման դասընթացների նախընտրելի ձևաչափը
Պատասխանների թիվ՝ 164

5 Եզրահանգումներ և առաջարկներ

Վերապատրաստման կարիքների գնահատման արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ համայնքապետարաններն ունեն վերապատրաստման խիստ անհրաժեշտություն թափոնների կառավարման և մասնավորապես դրա պլանավորման մի շարք առանցքային ուղղություններով և թեմաներով:

Հարցաշարը լրացնելու ժամանակ համայնքապետարանների աշխատակիցները հեռախոսազանգերի միջոցով կապ են հաստատել ծրագրի փորձագիտական թիմի հետ, և բազմիցս ընգծել են թափոնների կայուն կառավարման գծով վերապատրաստումների խիստ անհրաժեշտությունը:

Կոշտ թափոնների կառավարման պլանավորման մասով վերապատրաստման խիստ անհրաժեշտություն կա հետևյալ երկու ուղղություններով.

1. պլանավորման մեթոդաբանություն և անհրաժեշտ գործիքակազմ, պլանի կառուցվածք և բովանդակություն,
2. պլանավորման մեջ ՏՏ միջոցների կիրառում:

Համայնքապետարաններում արձանագրվել է անձնակազմի գիտելիքների և հմտությունների ցածր մակարդակ կոշտ թափոնների կայուն կառավարման այնպիսի հիմնական սկզբունքների և գործիքների մասով, ինչպիսիք են թափոնների հիերարխիան (ստորակարգումը), թափոնների ոլորտում կանաչ հանրային գնումները, թափոնների գոյացման կրճատման ծրագրերը:

Կարիք կա նաև կոշտ թափոնների կայուն կառավարման շուրջ ընդհանուր վերապատրաստումների, որոնց համար նպատակահարմար է ներառել Պատկեր 10-ում ներկայացված բոլոր թեմաները, քանի որ դրանց մասով համայնքապետարանների մեծ մասն արձանագրել է բացակայող կամ թերի գիտելիքներ:

Հավելված Ա – Վերապատրաստման կարիքների գնահատման հարցաշար

Թափոնների կառավարման համայնքային պլաններ պատրաստելու կարիքի գնահատում

Հարցաշար (համայնքներ)
Սույն հարցումն արվում է «Կոշտ թափոնների տեղական կառավարման պլանավորման ուղեցույցի մշակում և ուղեցույցի կիրառման համար վերապատրաստման կարիքների գնահատում» ծրագրի շրջանակներում:

1. Նշել մարզը_____

2. Նշել համայնքը_____

Ընդհանուր տեղեկություններ
1.1 Պլանավորման ի՞նչ փաստաթղթեր են մշակվում համայնքում (նշել համապատասխան վանդակներում):

Համայնքի հնգամյա զարգացման պլան	
Տարեկան աշխատանքային պլան	
Աղբահանության պլան	
Տնտեսական զարգացման պլան	
Այլ (մանրամասնել)	

1.2 Համայնքապետարանի բաժինները/ ստորաբաժանումները, որոնք ներգրավված են պլանավորման գործընթացում (նշել համապատասխան վանդակներում):

Համայնքի ղեկավարի աշխատակազմ	
Կումունալ բաժին	
Տնտեսական զարգացման բաժին	
Այլ (մանրամասնել)	

1.3 Քանի՞ մասնագետ են ներգրավվում պլանավորման գործընթացում (նշել թիվը)

1.4 Համայնքում մշակվե՞լ է աղբահանության (կամ թափոնների կառավարման) առանձին ռազմավարական պլան, որպես առանձին փաստաթուղթ: (Զարգացման պլանում տեղ գտած աղբահանության սխեմաները չեն համարվում առանձին աղբահանության պլան:)

Այո	Ոչ

Եթե մշակվել է առանձին աղբահանության պլան
2.1 Քանի՞ աշխատակից է ներգրավված պլանավորման մեջ: (նշել թիվը)

2.2 Միջին հաշվով որքա՞ն է տևում պլանավորման գործընթացը: (նշել օրերի թիվ)

2.3 Ի՞նչ քայլեր եք իրականացնում պլանը մշակելիս (նշում կատարեք տողերի դիմաց)

Պլանի մշակման ուղեցույցի կիրառում	
Համայնքի շահակիրների հետ հանդիպումներ	
Խնդիրների վերհանում	
Վերհանված խնդիրներից առաջնահերթությունների որոշում	
Ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն	
Նպատակների և թիրախների սահմանում	
Լոգիստիկ և տնտեսական հաշվարկ	
Այլ (մանրամասնել)	

Վերապատրաստման կարիքներ

3.1 Երբևէ անցկացվե՞լ է պլանավորման գծով վերապատրաստում (նշել այո կամ ոչ)	
Եթե վերապատրաստում անցկացվել է, ապա՝	
3.2 Քանի՞ աշխատակից է վերապատրաստվել (նշել թիվը)	
3.3 Քանի՞սն են ներկայում աշխատում (նշել թիվը)	
3.4 Ում կողմից է իրականացվել վերապատրաստումը (նշել կազմակերպության անունը)	

3.5 Թափոնների կայուն կառավարման ի՞նչ սկզբունքների և գործիքների եք ծանոթ կամ կիրառում (ծանոթ չեմ/ ծանոթ եմ, բայց չեմ կիրառում/ կիրառում եմ)

Աղտոտողը վճարում է սկզբունք	
Արտադրողի ընդլայնված պատասխանատվություն	
Թափոնների ստորակարգում	
Թափոնների կառավարման մասնակցային բյուջետավորում	
Կատարողական հիմքով պայմանագրերի կիրառում? (Performance based contracting)	
Կանաչ գնումներ թափոնների ոլորտում	
Թափոնների կրճատման ծրագրեր	
Աղբավայր հեռացվող թափոնների քանակների կրճատման խթաններ	

3.6 Ինչպե՞ս կգնահատեք թափոնների կառավարման հետևյալ թեմաների շուրջ Ձեր համայնքապետարանում/մարզպետարանում ներկայիս գիտելիքների և կարողությունների մակարդակը: 0՝ բացակայում է, 1՝ թերի է, 2՝ բավարար է, 3՝ գերազանց է

Թեմաներ	0	1	2	3
Կոշտ թափոնների գոյացման կրճատման եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Կոշտ թափոնների տեսակավորման եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Կոշտ թափոնների հավաքման օպտիմալացում				
Կոշտ թափոնների վերամշակման եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Օրգանական թափոնների կոմպոստացման եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Օրգանական թափոնների այլ գործածության եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Համայնքում գոյացող վտանգավոր կոշտ թափոնների անվտանգ գործածության եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Խոշոր եզրաչափերի թափոնների գործածության եղանակներ և դրանց խթանման գործիքներ				

Աղբավայր հեռացվող թափոնների քանակների կրճատման եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Աղբավայրերի կայուն կառավարում (ստեղծում, շահագործում, փակում)				
Համայնքում թափոնների չնախատեսված վայրերում թափոնների տեղադրման կանխարգելման եղանակներ				
Թափոնների թերի կառավարման վերահսկողություն				
Թափոնների թերի կառավարման ազդեցությունները հանրային առողջության վրա				
Թափոնների թերի կառավարման ազդեցությունները շրջակա միջավայրի վրա				
Թափոնների թերի կառավարման սոցիալ-տնտեսական ազդեցություններ				
Թափոնների թերի կառավարման ազդեցությունները կլիմայի փոփոխության վրա				
Համայնքում հանրային իրազեկության բարձրացման եղանակներ				
ՊՄՀՀ պայմանագրերի արդյունավետ կիրառում				
Համայնքում գոյացող կոշտ թափոնների տվյալների հավաքագրման մեխանիզմներ				
Համայնքում գոյացող կոշտ թափոնների տեսակներ և դրանց կառավարման առանձնահատկություններ				
Համայնքում գոյացող կոշտ թափոնների բաղադրության գնահատում				
Համայնքում գոյացող կոշտ թափոնների կառավարման հիմնական դերակատարներ և նրանց դերը				
Արտադրողի ընդլայնված պատասխանատվություն որպես կոշտ թափոնների կառավարման արդյունավետ միջոց				
Թափոնների կայուն կառավարման Ֆինանսավորում և բյուջետավորում (ներառյալ մասնակցային)				
Թափոնների կառավարման պլանավորման մեջ հանրային մասնակցության ապահովման				

3.7 Ինչի՞ վերաբերյալ վերապատրաստման կարիքներ ունեք թափոնների կառավարումը առավել արդյունավետ համար (նշում կատարեք տողերի դիմաց):

Մշակվելիք պլանի կառուցվածք և բովանդակություն	
Պլանավորման համար անհրաժեշտ գործիքակազմ	
Պլանավորման մեջ ՏՏ միջոցների կիրառում	

Պլանավորման մեթոդաբանություն	
Այլ (մանրամասնել)՝	

3.8 Վերապատրաստման նախընտրելի ձևաչափը (նշում կատարել ստորև բոլոր այն տողերի դիմաց, որոնք համապատասխանում են)

Լսարանային (ոչ հեռավար)	
Աշխատավայրում (ոչ հեռավար)	
Հեռավար	
Բոլոր տարբերակներն ընդունելի են	

Եթե չի մշակվել առանձին աղբահանության պլան
2.5 Որո՞նք են աղբահանության պլաններ չունենալու պատճառները (նշում կատարել ստորև՝ համապատասխան տողի դիմաց)

Ժամանակի սղություն	
Մարդկային ռեսուրսների սակավություն	
Մասնագետի, գիտելիքի, հմտությունների պակաս	
Աղբահանության առանձին պլանի կարիք չի եղել	
Այլ (մանրամասնել)՝	

Վերապատրաստման կարիքներ

3.1 Երբևէ անցկացվե՞լ է պլանավորման գծով վերապատրաստում (նշել այո կամ ոչ)	
Եթե վերապատրաստում անցկացվել է, ապա՝	
3.2 Քանի՞ աշխատակից է վերապատրաստվել (նշել թիվը)	
3.3 Քանի՞սն են ներկայում աշխատում (նշել թիվը)	
3.4 Ում կողմից է իրականացվել վերապատրաստումը (նշել կազմակերպության անունը)	

3.5 Թափոնների կայուն կառավարման ի՞նչ սկզբունքների և գործիքների եք ծանոթ կամ կիրառում (ծանոթ չեմ/ ծանոթ եմ, բայց չեմ կիրառում/ կիրառում եմ)

Աղտոտողը վճարում է սկզբունք	
Արտադրողի ընդլայնված պատասխանատվություն	
Թափոնների ստորակարգում	
Թափոնների կառավարման մասնակցային բյուջետավորում	
Կատարողական հիմքով պայմանագրերի կիրառում? (Performance based contracting)	
Կանաչ գնումներ թափոնների ոլորտում	
Թափոնների կրճատման ծրագրեր	
Աղբավայր հեռացվող թափոնների քանակների կրճատման խթաններ	

3.6 Ինչպե՞ս կգնահատեք թափոնների կառավարման հետևյալ թեմաների շուրջ Ձեր համայնքապետարանում/մարզպետարանում ներկայիս գիտելիքների և կարողությունների մակարդակը: 0՝ բացակայում է, 1՝ թերի է, 2՝ բավարար է, 3՝ գերազանց է

Թեմաներ	0	1	2	3
Կոշտ թափոնների գոյացման կրճատման եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Կոշտ թափոնների տեսակավորման եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Կոշտ թափոնների հավաքման օպտիմալացում				
Կոշտ թափոնների վերամշակման եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Օրգանական թափոնների կոմպոստացման եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Օրգանական թափոնների այլ գործածության եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Համայնքում գոյացող վտանգավոր կոշտ թափոնների անվտանգ գործածության եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Խոշոր եզրաչափերի թափոնների գործածության եղանակներ և դրանց խթանման գործիքներ				

Աղբավայր հեռացվող թափոնների քանակների կրճատման եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Աղբավայրերի կայուն կառավարում (ստեղծում, շահագործում, փակում)				
Համայնքում թափոնների չնախատեսված վայրերում թափոնների տեղադրման կանխարգելման եղանակներ				
Թափոնների թերի կառավարման վերահսկողություն				
Թափոնների թերի կառավարման ազդեցությունները հանրային առողջության վրա				
Թափոնների թերի կառավարման ազդեցությունները շրջակա միջավայրի վրա				
Թափոնների թերի կառավարման սոցիալ-տնտեսական ազդեցություններ				
Թափոնների թերի կառավարման ազդեցությունները կլիմայի փոփոխության վրա				
Համայնքում հանրային իրազեկության բարձրացման եղանակներ				
ՊՄՀՀ պայմանագրերի արդյունավետ կիրառում				
Համայնքում գոյացող կոշտ թափոնների տվյալների հավաքագրման մեխանիզմներ				
Համայնքում գոյացող կոշտ թափոնների տեսակներ և դրանց կառավարման առանձնահատկություններ				
Համայնքում գոյացող կոշտ թափոնների բաղադրության գնահատում				
Համայնքում գոյացող կոշտ թափոնների կառավարման հիմնական դերակատարներ և նրանց դերը				
Արտադրողի ընդլայնված պատասխանատվություն որպես կոշտ թափոնների կառավարման արդյունավետ միջոց				
Թափոնների կայուն կառավարման Ֆինանսավորում և բյուջետավորում (ներառյալ մասնակցային)				
Թափոնների կառավարման պլանավորման մեջ հանրային մասնակցության ապահովման				

3.7 Ինչի՞ վերաբերյալ վերապատրաստման կարիքներ ունեք թափոնների կառավարումը առավել արդյունավետ համար (նշում կատարեք տողերի դիմաց):

Մշակվելիք պլանի կառուցվածք և բովանդակություն	
Պլանավորման համար անհրաժեշտ գործիքակազմ	
Պլանավորման մեջ ՏՏ միջոցների կիրառում	

Պլանավորման մեթոդաբանություն	
Այլ (մանրամասնել)՝	

3.8 Վերապատրաստման նախընտրելի ձևաչափը (նշում կատարել ստորև բոլոր այն տողերի դիմաց, որոնք համապատասխանում են)

Լսարանային (ոչ հեռավար)	
Աշխատավայրում (ոչ հեռավար)	
Հեռավար	
Բոլոր տարբերակներն ընդունելի են	